

## Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին

Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով, կարծիքի է ներկայացվում [«Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական հնգամյա ծրագրի»](#) նախագիծը՝ խնդրանքով նշված փաստաթղթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների պարագայում, դրանք մինչև սույն թվականի **օգոստոսի 15-ը** ներկայացնել ՀՀ վիճակագրական կոմիտեին, հետևյալ հասցեներով՝

**փոստային հասցեն՝** ք. Երևան, 0010, Հանրապետության պողոտա,  
Կառավարության տուն թիվ 3 կամ

**էլեկտրոնային հասցեն՝** [svod@armstat.am](mailto:svod@armstat.am)

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դրույթի, վիճակագրական ծրագրերը մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Ըստ վերոնշյալ օրենքի, ՀՀ տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Վիճակագրական ծրագրերը մշակվում են որպես արդյունավետ ռազմավարական և օպերատիվ կառավարման ու համակարգման առանցքային գործիքներ՝ ողջ ազգային վիճակագրական համակարգի համար:

Հնգամյա վիճակագրական ծրագիրը (հոդված 15) մշակվում է ազգային վիճակագրական համակարգի համար և սահմանում է ՀՀ պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացման ուղղությունները օգտագործողների ընթացիկ և զարգացող կարիքները բավարարելու նպատակով:

Հնգամյա վիճակագրական ծրագիրը սահմանում է ազգային վիճակագրական համակարգի հայեցակարգային մոտեցումները և զարգացման գերակա ուղղությունները:

**Շնորհակալություն համագործակցության համար**